


Հայկական Հուշարձանների ճանաչման Ծրագիր
ՀՅՈՒՄԻՍ – ՀԱՐԱՎ ՄԻՋԱՆՑՔ
 մարտի 15, 2011թ.



Ծրագրի տեսակը. Հիմնական մշակութային/զբոսաշրջային արժեքներ կայացնող տեսարժան վայրերի բարեկարգում, մշակույթի միջոցով տնտեսական զարգացում:

ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ

- Արմինկո Քոմյունիքեյձնգ
- Ճանապարհորդությունների հայկական բյուրո
- Գյուլնրիում Իտալիայի պատվո հյուպատոս
- Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
- Մշակույթի նախարարություն
- Տրանսպորտի նախարարություն
- ԻԿՕՄՕՍ/Հայաստան
- Հնագիտության և ազգագրության ինստիտուտ
- Հայաստանի Բուսաբանության ինստիտուտ / ՀԹՊՄ
- Ղեկավարական այսօր ՀԿ

ՀՅՈՒՄԻՍ – ՀԱՐԱՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔ

83	Հուշարձաններ և տեսարժան վայրեր
410	Հուշարձանների վերաբերյալ տեղեկատվական վահանակներ
492	Ուղեցույց նշաններ
16	Բնության արահետներ
64	Բնության հուշարձանների վերաբերյալ վահանակներ

Երթուղիներ

7	Երթուղիներ
56	Տեղեկատվական վահանակներ երթուղիների վերաբերյալ
49	Երթուղիների ուղեցույց վահանակներ
49	Երթուղիների ցուցատախտակներ
500,000	Գրքույկներ

Ջրոսաշրջիկների սպասարկման կենտրոններ

5	Ջրոսաշրջիկների սպասարկման կենտրոն
5	Համայնքային զարգացման ծրագիր

- Կանաչ խաչ բնապահպանական ՀԿ
- Տուր Արմենիա

ԲՈՎԱՆՊԱԿՈՒԹՅՈՒՆ

Հուշարձաններ էջ 3
 Բնության արահետներ էջ 5
 Երթուղիներ էջ 5
 Ջրոսաշրջիկների սպասարկման կենտրոն էջ 6
 Պարտավորություններ, գործընթաց էջ 6
 Աջակցություն, գործընկերներ էջ 7
 Ղեկավար անձնակազմ էջ 8
 Հավելվածներ Ա, Բ, Գ, Դ էջ 9

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այնպիսի շարունակական գործունեությունը, ինչպիսին իրականացնում է AMAP-ը, առավելագույնս արդյունավետ է, եթե փոխհատուցվում են տեսարժան վայրերը բարեկարգելուն ուղղված ջանքերը: Մեր հովանավորի աջակցությամբ AMAP-ը մեր ծրագրերում գործընկերություն է նախաձեռնել հանրային և մասնավոր սեկտորների միջև: Մինչև օրս մեր ֆինանսավորման 80%-ը հայթայթել ենք մասնավոր աղբյուրներից: Այնուամենայնիվ, մեր աշխատանքը շարունակելու և Հայաստանի հուշարձանների ճանաչման, պահպանման և գովազդման արդյունքում զբոսաշրջության միջոցով մշակութային և տնտեսական զարգացման հնարավորություններ ստեղծելու մեր նպատակին հետամուտ՝ հարկ ենք համարում ընդլայնել մեր գործունեությունը՝ միաժամանակ ավելացնելով հանրային և մասնավոր սեկտորների միջև գործակցությունն ու հաստատելով միություններ, ինչն էլ վերջո կհանգեցնի գործողությունների ինքնաբավ ծրագրի: Մինչև օրս AMAP-ը տեղադրել է 329 տեղեկատվական վահանակ և 352 ուղեցույց նշան Հայաստանի 175 տեսարժան վայրերում: Նախորդ կարճատև եռամյա ժամանակահատվածում, ներկայացնելով երկրի մշակութային արժեքը, մենք սկսել ենք լիարժեք տեղեկություն ապահովել Հայաստանի մասին և առաջ բերել տնտեսական և սոցիալական խթանները՝ պահպանելու հուշարձանները և բարեկարգելու դրանց տարածքը:

2008
7 ՓՈՐՁՆԱԿԱՆ ՎԱՅՐ ~ 54 ԴՐՍՈՒՄ ՏԵՂԱԴՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՎԱՅՆԱԿ, 29 ՈՒՂԵՑՈՒՅՑ ՆՇԱՆ ԵՎ 57 ՀԱԽՃԱՊԱԿՅԱՑ ՑՈՒՑԱՆԱԿ, 1 ԲՆՈՒԹՅԱՆ ԱՐԱՅԵՏ

2009
52 ՎԱՅՐ ~ 119 ԴՐՍՈՒՄ ՏԵՂԱԴՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՎԱՅՆԱԿ, 145 ՈՒՂԵՑՈՒՅՑ ՆՇԱՆ, 32 ՀԱԽՃԱՊԱԿՅԱՑ ՑՈՒՑԱՆԱԿ, 13 ՄԵՏԱՔՍԻ ՃԱՆԱՊԱՐԴԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՅՆԱԿ, 5 ԲՆՈՒԹՅԱՆ ԱՐԱՅԵՏ, 900 ԼԱՄԻՆԱՊԱՏ ՈՒՂԵՑՈՒՅՑ

2010
116 ՎԱՅՐ ~ 156 ԴՐՍՈՒՄ ՏԵՂԱԴՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՎԱՅՆԱԿ, 178 ՈՒՂԵՑՈՒՅՑ ՆՇԱՆ, 64 ՑՈՒՑԱՆԱԿ, 2 ԲՆՈՒԹՅԱՆ ԱՐԱՅԵՏ, 26 ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՄՈՏ 64 ԵՐԹՈՒՂՈՒ ՆՇԱՆ, 750 ԼԱՄԻՆԱՊԱՏ ՈՒՂԵՑՈՒՅՑ, 2 ԹԱՆԳԱՐԱՆ, 1 ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՎԱՅՔ, 5 ՓՈՐՁՆԱԿԱՆ ԱՌԴԻՈՏՈՒՐ, 2 ՀԱՆԳՍՏԻ ԿԱՆԳԱՌ/ՁԵՆՔԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԵՆՏՐՈՆ, 2 ՎԱՅՐ «ՈՐԴԵՐԻՐ՝ ԶՈՒՇԱՐՁԱՆ» ԾՐԱԳՐԻ ՀԱՍԱՐ

Նախատեսվող նոր գործողությունները. «Հյուսիս – հարավ մշակութային միջանցքի» երկայնքով տեղադրել տեղեկատվական վահանակներ «Հյուսիս – հարավ միջանցք» ծրագրի հովանավորների հետ գործակցությամբ և նրանց հովանավորությամբ: Տեղադրել զբոսաշրջիկների սպասարկման կենտրոններ միջանցքի երկայնքով՝ ապահովելու զբոսաշրջային և մշակութային ծառայություններ: Տեղադրել երթուղիների և բնության արահետների ցուցանակներ նույն միջանցքի երկայնքով:

ՆՊԱՏԱԿԸ

Մեր նպատակն է խթանել Հայաստանի հուշարձանների և տեսարժան վայրերի ընձեռած մշակութային և զբոսաշրջային հնարավորություններից բխող կայուն տնտեսական և սոցիալական զարգացումը: Միևնույն ժամանակ մենք ձգտում ենք մեծացնել հանրային և մասնավոր սեկտորների միջև գործակցությունը՝ հուշարձանների պահպանության և խնամքի ուղղությամբ:

AMAP-Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Առաջարկվող ծրագրի խնդիրը տեղական մակարդակում տնտեսական հզորացումն է, միևնույն ժամանակ նպաստելով Հայաստանի տեսարժան վայրերում զբոսաշրջիկների ձեռք բերած դրական փորձին և Հյուսիս – հարավ միջանցքի երկայնքով գտնվող հայկական հուշարձանների պահպանմանը՝ Հայաստանում ստեղծելով «Հյուսիս – հարավ մշակութային միջանցք»՝ նոր տրանսպորտային միջանցքի համապատասխան: Մեր խնդիրն է նաև ապահովել կայուն եկամուտ տեսարժան վայրերի հետագա զարգացման համար՝ միաժամանակ ամրապնդելով համայնքների և նրանց տարածքներում գտնվող հուշարձանների միջև կապը:

Առաջարկվող ռազմավարությամբ նախատեսվում է զգալիորեն բարեկարգել Հայաստանի պատմական, մշակութային և բնության հուշարձաններին հարակից տարածքը, ինչի արդյունքում Հայաստանն ավելի գրավիչ կդառնա զբոսաշրջության համար: Նախատեսվում է նաև կայուն եկամուտներ ստանալու հնարավորություն ստեղծել տեղական մակարդակում, որպեսզի մասնավոր սեկտորը ներգրավվի հուշարձանների և տեսարժան վայրերի պահպանման և բարեկարգման գործում:

ԹԻՐԱԽՆԵՐԸ ▲

Հայկական Հուշարձանների ճանաչման Ծրագիրը (AMAP) շարունակական ծրագիր է, որը նպատակ ունի բարձրացնել Հայաստանի պատմական, մշակութային և բնության հուշարձանների մասին իրազեկությունը՝ առաջ բերելով կենսական և շարունակական գործընկերություն հանրային և մասնավոր սեկտորների միջև, որպեսզի ընդլայնվի տեղական համայնքների կողմից Հայաստանի հուշարձանների պահպանմանը և բարեկարգմանն ուղղված գործունեությունը: Տեղական համայնքներին խրապուսովում է եկամուտ քաղել իրենց հարակից տարածքում գտնվող հուշարձաններից՝ գիտակցելով, որ այսպես թե բարձրացվում է այս հուշարձանների կարևորության մասին իրազեկության մակարդակը, թե՛ աճում է դրանց պաշտպանման ու պահպանման հնարավորությունը: Մեր հիմնական նպատակներն են՝

- Ստեղծել և տեղադրել բազմալեզու, մուլտիմեդիոն տեղեկատվական վահանակներ, ուղենիշ ցուցանակներ և ապահովել այցելուների դրական փորձը՝ Հայաստանի պատմական և մշակութային հուշարձաններն այցելելիս:
- Աճել նույնը՝ Հայաստանի թանգարանների և հնագիտական պեղումների վայրերի համար:
- Աճել նույնը՝ Հայաստանի բնության հուշարձանների և բնության արահետների համար:
- Կազմել թեմատիկ զբոսաշրջային երթուղիներ, որոնք խմբավորում են հուշարձաններն ըստ թեմաների՝ այս կերպ ավելի նպաստելով այցելուների դրական փորձին:

- Մշակել և տարածել բազմալեզու մուլտիմեդիոն տեղեկատվություն Հայաստանի հուշարձանների մասին, այդ թվում՝ աուդիոտուրեր, տեսանյութեր և ֆիլմեր, ինտերնետային և այլ մեդիա ձևաչափերով:
- Ստեղծել և զարգացնել զբոսաշրջային ինքնաբավենթակառուցվածք (հանգստի կանգառներ, զբոսաշրջիկների սպասարկման կենտրոններ, մեդիա), որը կնպաստի հուշարձանների ճանաչմանը:
- Հասանելիություն ապահովել ֆիզիկական հաշմանդանություն ունեցող այցելուների համար:
- Մշակել կայուն եկամուտ ապահովող և վերոնշյալ նպատակներին համահունչ ծրագրեր, որոնցից ստացված եկամուտը կուղղվի տեղական համայնքներին, հուշարձանների պահպանությունը և մեր ծրագրի կայուն շարունակականության ապահովմանը:
- Կրթել տեղական և միջազգային համայնքների բնակիչներին Հայաստանի մշակութային, պատմական և բնական ժառանգության մասին:
- Իրականացնել այլ գործողություններ՝ աջակցելու հայկական հուշարձանների իրազեկության բարձրացմանը և դրանց պահպանությանը:
- Անհրաժեշտության դեպքում համագործակցել այլ կազմակերպությունների հետ՝ իրագործելու ծրագրի նպատակները:

ԾՐԱԳԻՐԸ ▲

2011թ. մենք պլանավորում ենք ամրապնդել մեր ներկայությունը երկրում՝ թարմացնելով 2008 – 2009թթ. տեղադրված վահանակները, տևական գործընկերություն հաստատել Մատենադարանի հետ՝ թարգմանելով և տեղադրելով համատեքստային վահանակներ նոր ցուցարահների համար, և ավարտել «Շրջագայություն երևանում» ծրագիրը:



1. ՎԱՀԱՆԱԿՆԵՐ ԳՅՈՒՄԻՍ – ՀԱՐԱՎ ՄԻՋԱՆՑՔԻ ՀՈՒՇԱՐԶԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ▲

- Տեսարժան վայր՝ 83
- Վահանակ (պլանավորվում է)՝ 410
- Ուղեցույց նշան (պլանավորվում է)՝ 492


Մենք շարունակում ենք իրականացնել մեր հիմնական ծրագրային գործունեությունը՝ ստեղծել և տեղադրել բազմալեզու տեղեկատվական վահանակներ և ուղեցույց նշաններ Հայաստանի կարևոր պատմական, բնության և մշակութային հուշարձանների հարևանությամբ:

Այս ծրագրային առաջարկը նախատեսում է Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի երկայնքով՝ Բավրայից մինչև Ագարակ նոր վահանակների և նշանների տեղադրում, ինչպես նաև նախկինում տեղադրվածների թարմացում՝ կիրառելով նոր եվրոպական տեխնոլոգիա: Այս տեխնոլոգիայով ներկը քսվում է GRP-ի (ապակեպատ պլաստիկ) վրա և մեկուսացվում հատուկ շերտով: Վահանակներին տրվում է 5 – 8 տարվա երաշխիք նորմալ մաշվածության, պատռման և եղանակային պայմաններից քայքայման դեմ: Ապակեպատ պլաստիկ նյութը դիմակայում է ճնշմանը և ոչ ուժեղ վանդալիզմին: GRP վահանակները տեղադրելիս՝ մենք դրանք կամրացնենք պողպատե թիթեղների վրա և հին շրջանակները կփոխարինենք նոր ավելի ամուր շրջանակներով, որոնք սկսել ենք օգտագործել 2009թ.:

Մեր ներկայիս ուղեցույց նշանները ավելի լավ են դիմակայում Հայաստանի յուրահատուկ պայմաններին: Այսպիսով, կշարունակենք օգտագործել երկրում կիրառվող տեխնոլոգիան՝ թարմացնելու առկա նշանները կամ տեղադրելու նորերն՝ ըստ անհրաժեշտության: Բոլոր վահանակների և նշանների տեղադրումը կլինի տվյալ համայնքների, Մշակույթի նախարարության կամ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ներքոնումը, իսկ մայրուղիների դեպքում՝ Կապի և տրանսպորտի նախարարության ներքոնումը:

Տեքստերը. Տեղադրման առաջին փուլում վահանակների տեքստերը հաստատվել են բազմաթիվ փորձագետների և կազմակերպությունների կողմից: Մենք կիրականացնենք լրացուցիչ ստուգումներ և հաստատման կներկայացնենք դրանք՝ ապահովելու տեքստերի առավելագույն ճշգրտություն: Նախքան վահանակների տեքստերը հաստատման ներկայացնելը, դրանք ստուգում ենք առնվազն 4 մակարդակով, իսկ վերջնական հաստատումը վերապահված է և իրականացվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (եկեղեցիներ և կրոնական հուշարձաններ), Մշակույթի նախարարության (նրա պահպանության ներքո գտնվող ոչ եկեղեցական հուշարձաններ), Բուսաբանության ինստիտուտի կամ ՀԹՊՄ-ի (բնություն) և առանձին համայնքների փորձագետների կողմից (պատմական շրջաններ/թաղամասեր):

Խմբագիրներն անհատ փորձագետներ են, որոնք ստուգում են իրենց մասնագիտական ոլորտներին վերաբերող առանձին վահանակների բովանդակությունը և ներկայացնում են Հնագիտության և Ազգագրության ինստիտուտը, Բուսաբանության ինստիտուտը, ԻԿՕՄՍ – Հայաստանը և այլ կազմակերպություններ ըստ վերաբերության:



ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

Հյուսիս-հարավ միջանցքի երկայնքով գտնվող տեսարժան վայրերը, որոնց մոտ նախատեսվում է տեղադրել նշաններ և տեղեկատվական վահանակներ.

Շիրակ

- Բրոնզի դարի բնակավայր Բավրայուն
- Աշոցքի մեգալիթյան հուշարձանները
- Հողմիկի հելլենիստական բնակավայրը
- Պատմական Գյումրին (թարմացնել)
- Հոռոմ
- Հառիճավանք
- Ղազանչեցոց միջնադարյան գերեզմանոցը
- Ցողանարգի բրոնզեդարյան հնավայրը
- Քեթի բրոնզեդարյան բնակավայրը
- Բենիամինի հելլենիստական հնավայրը
- Արթիկի միջնադարյան հնավայրերը

Արագածոտն

- Թալին
- Աշնակ
- Շամիրամ
- Ագարակ/Աղծք
- Բյուրական
- Պատմական Աշտարակ
- Ղաշտաղեն
- Արուճ (թարմացնել)
- Կոշ
- Տեղեր
- Ամբերդ (թարմացնել)

Երևան

- Շրջագայություն Հին Երևանում

Արարատ

- Ղմիտրով (ատրիներ)
- Պատմական Արտաշատ
- Ուրցի հովիտ (Սուրբ Կարապետ, Մարգարետունիների ամրոցը, Խոսրով, Գորովանի ավազուտներ)
- Արարատի խաղողի այգիները (Գինու ուղի)
- Արարատի բուսական աշխարհը (հիրիկների արահետը)
- Արարատի բուսական աշխարհը (Կակաչի արահետը)
- Տիգրանաշեն (հիրիկների հովիտը)
- Ղվին
- Խոր Վիրապ
- Արարատի բուսական աշխարհը
- Պ. Սևակ գյուղը (քարի դար)
- Ջանգալատուն (Պ. Սևակ)

Վայոց Ձոր

- Ելպին / Չիվա
- Արենի – Արփի – Եղեգնաձոր (Գինու ուղի)
- Նորավանքի կիրճը (թարմացնել) (հնագույն կոշիկը)
- Մագիլի քարանձավը
- Եղեգիսի հովիտ (ուղեցույց նշան)
- Արջի քարանձավը
- Վայք
- Գնդեվանք
- Արենի (թարմացնել)
- Նորավանք (թարմացնել)
- Թռչունների քարանձավը
- Մոզրովի քարանձավը
- Եղեգնաձոր
- Մոզ
- Հեր-Հեր
- Ջերմուկ

Սյունիք

- Ջանգեզուրի դարպասները
- Անգեղակոթ
- Քարահունջ - Չորաց Քար
- Ուղտասարի ժայռապատկերներ
- Որոտնավանք
- Որոտնաբերդ
- Սատանի կամուրջ (թարմացնել)
- Շրջագայություն Գորիսում
- Սև լիճ
- Խնձորեսկ
- Որոտան գետի կիրճը
- Երիցավանք
- Հալիձոր
- Բաղաբերդ
- Վահրավար գյուղ
- Շվանիձոր
- Շիկահողի անտառներ
- Սպենդիարյան լիճը
- Շաքի
- Սիսիան
- Աղուտի
- Որոտանի աղբյուրներ
- Շինուհայր
- Տաթև (թարմացնել)
- Վերիշեն
- Մեծ Իշխանասար լեռը
- Քարահունջ գյուղ
- Բղենո Նորավանք
- Կապան
- Վահանավանք
- Քաջարան
- Մեղրի
- Ներքին Հանդ



2. ԲՆՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԵՏՆԵՐ ▲

- Արահետներ՝ 16
- Վահանակներ (պլանավորվում է)՝ 64
- GPS քարտեզներ (պլանավորվում է)՝ 32
- Ցուցանակներ (պլանավորվում է)՝ 160

Հյուսիս-հարավ միջանցքի համար մենք կավելացնենք նոր վահանակներ և նշաններ, ցուցանակներով կառանձնացնենք արահետները և կթարմացնենք բնության մասին նախկինում տեղադրված վահանակները, որոնք կընթանան վահանակների թարմացման հիմնական ծրագրին զուգահեռ, ինչպես նկարագրված է վերը:

Միջանցքն անցնում է Հայաստանի կուսական բնության միջով կամ կողքով, ներառյալ եզակի միկրոկլիմայական գոտիները և էկոհամակարգերը, որտեղ աճում են Հայաստանի խիստ յուրատեսակ բուսական և բնակվում կենդանական աշխարհի ներկայացուցիչները: Ավելի քան 350 թռչնատեսակներով, բուսական աշխարհի 3500 և կենդանական աշխարհի հարյուրավոր տեսակներով՝ Հայաստանն առանձնահատուկ է ոչ միայն Կովկասում, այլև ողջ աշխարհում՝ բնապատկերների, բուսական և կենդանական իր զարմանահարաշ բազմազանությամբ: «Մշակութային միջանցքը», որն առաջարկում ենք ստեղծել, բնության մշակույթի մի հարթակ է, որն ավելի կշեշտվի Հյուսիս – հարավ միջանցքի սկզբնամասում և երկայնքով տեղադրվող բացատրական վահանակների և ուղեցույց նշանների միջոցով:

Շիրակ՝ Արփա լճի երթուղի
 Արագածոտն՝ Արագածի ծաղկային արահետ
 Արարատ՝ Ազատի ջրամբար – Խոսրովի արգելոց - Արարատի տեսարաններ - Գինու ուղի – Թռչունների արահետ
 Վայոց Ձոր՝ Նորավանքի կիրճ – քարայրներ – Գինու ուղի – Ջերմուկ
 Սյունիք՝ Սպենդիարյան ջրամբար – Ուղտասար լեռ – Սատանի կամուրջ – Որորտանի կիրճ – Ներքին Հանդ – Շիկահողի անտառներ



3. ԵՐԹՈՒԴԻՆԵՐ ▲


- Երթուղիներ՝ 7
- Երթուղիների վահանակներ (պլանավորվում է)՝ 56
- Երթուղիների ուղեցույց նշաններ (պլանավորվում է)՝ 49
- Երթուղիները նշող ցուցանակներ (պլանավորվում է)՝ 49
- Գրքույկներ՝ 500,000

Մենք շարունակում ենք խմբավորել հուշարձանները թեմատիկ երթուղիներում՝ ընդլայնելով վահանակների հաջողված տեղադրությունը բնության զանազան արահետների (2008-2010), «Մետաքսի ճանապարհի» և «Գինու ուղի» երկայնքով 2009թ. և անցյալ տարի կազմված երկու թեմատիկ ուղիներում («Թագավորներ, թագուհիներ և իշխաններ» և «Քաղաքակրթության օրրան»): Այս երթուղիները ներկայացնում են տեսարժան հուշարձաններն ըստ թեմաների:

Գրքույկներ. Որպես առանձին խմբիր՝ մենք նաև նխատեսում ենք 500,000 գրքույկների հրատարակումը: Գրքույկները կբաշխվեն զբոսաշրջիկներին տարբեր վայրերում՝ հովանավորների վաճառքի կետերում և սպասարկման կենտրոններում օդանավակայանում, զբոսաշրջային գործակալություններում և այլն:

ԵՐԹՈՒԴԻՆԵՐԻ ԹԵՄԱՆԵՐԸ

- Մետաքսի ճանապարհ
- Քաղաքականության օրրան
- Ջրիստոնեության հետքերով
- Թագավորներ, թագուհիներ և իշխաններ
- Գինու ուղի
- Արարատի արահետը
- Հայաստանի լեգենդները



4. ԶԲՈՍԱՇՐՋԻԿՆԵՐԻ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ ▲

- 5 կենտրոն (յուրաքանչյուր մարզում մեկը)
- Համայնքային զարգացման ծրագիր

Հայաստան այցելողների շրջանում ամենահաճախակի հանդիպող բողոքներից մեկը վերաբերում է զբոսաշրջիկների հանգստի կանգառներում կամ սպասարկման կենտրոններում որակյալ տեղեկատվության և մաքուր սանհանգույցների բացակայությանը: Մեկ այլ բողոք վերաբերում է սպասարկման առկա որակի կամ ապրանքների և դրանց փաթեթավորման, ինչպես նաև ծառայությունների ու դրանց մատուցման և միջազգային զբոսաշրջիկի ակնակալիքների միջև անհամապատասխանությանը:

Երկու հանգստի կանգառ տեղադրվել է երկու կետերում՝ Պողաձևում և Նորատուսում. դրանք կհամատեղեն զբոսաշրջային ծառայությունները՝ տեղական արտադրանքի և համայնքի բնակիչների ձեռքի աշխատանքի հետ՝ հնարավորություն ընձեռելով համայնքներին՝ տնտեսապես օգտվել իրենց հարակից տարածքում գտնվող հուշարձաններից: «Մետաքսի ճանապարհի» երկայնքով հանգստի կանգառների տեղադրման ընթացիկ բաղադրիչի իրագործմանը զուգահեռ՝ մենք ցանկանում ենք ստեղծել տարվա բոլոր եղանակներին հարմար կենտրոն՝ մաքուր սանհանգույցներով: Սա կլինի շինություն՝ զբոսաշրջային տեղեկատվության ապահովման, տեղական համայնքի բնակիչների ձեռքի աշխատանքի և արտադրանքի վառաքի, ինչպես նաև զբոսաշրջային ծառայությունների մատուցման վայր:

Սա նաև եկամտաբեր ծրագիր է և համատեղում է հանրային և մասնավոր ֆինանսական միջոցները՝ ողջ երկրում զբոսաշրջիկների սպասարկման կենտրոններ հիմնելու նպատակով: Այս կենտրոնները կսպասարկեն թե միջազգային, թե հայաստանաբնակ զբոսաշրջիկներին, տեղական համայնքներին և անհատ հովանավորներին:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐ ▲

- Մեր դրամաշնորհատուները և այն կազմակերպությունները, որոնք ֆինանսավորում են այս առաջարկը, ներկայացված են այս առաջարկի սկզբում: ԳՈՐԾԸՆԿԵՐՈՋՆԵՐԸ, որոնք կմասնակցեն այս ծրագրին, երբ առաջարկը ներկայացվի և ֆինանսավորվի, թվարկված են այս փաստաթղթի սկզբում և առանձին գործողությունների մանրամասն նկարագրություններում:
- Համապատասխան ԳՈՐԾԸՆԿԵՐՈՋ հետ համագործակցությամբ AMAP-ը կպատրաստի այն վայրերի ցանկը, որոնք կներառնվեն այս առաջարկում նշված առանձին գործողություններում և կատարվելիք աշխատանքում:
- AMAP-ը կհավաքագրի և կկառավարի կայքում տեղադրվելիք ողջ տեղեկատվությունը, որը կտրամադրվի, կխմբագրվի և/կամ կստուգվի համապատասխան ԳՈՐԾԸՆԿԵՐՈՋ կողմից: Յուրաքանչյուր ԳՈՐԾԸՆԿԵՐՈՋ կստանա նախապես ստուգված և համապատասխան փորձագետի կողմից կամ ըստ հանրագիտարանի կամ այլ գիտական հոդվածի հաստատված տեղեկատվություն.
 - ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ և ԱՆՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ պահպանության ներքո գտնվող մշակութային հուշարձանների դեպքում Մշակույթի նախարարությունն էլ կստուգի և կհաստատի տեքստերի բովանդակությունը: Բացի այդ, Մշակույթի նախարարությունը կկատարի նաև կրոնական տեքստերի նախնական ստուգումը, որոնք հետո կուղարկվեն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ տեքստի վերջնական ստուգման և հաստատման համար:
 - Կրոնապաշտամունքային բովանդակությամբ նյութերը կստուգվեն և վերջնականապես կհաստատվեն Աթ. ԷՋՄԻԱԾՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ կողմից:
 - Բնության հուշարձանների մասին տեղեկատվությունը կստուգվի և կհաստատվի ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ կամ ԹՈՉՈՒՆՆԵՐԻ ՊԱՅՊԱՆՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ կողմից, ըստ վերաբերության:
 - Նախապատմականից մինչև հնագույն ժամանակները թվագրվող նյութերը կստուգվեն և կհաստատվեն ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ և ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ կողմից, ըստ վերաբերության:
 - Խմբագրելու, ստուգելու և հաստատելու համար ԱՅԼ ՓՈՐՉԱԳԻՏԱԿԱՆ ԱՐՔՅՈՒՐՆԵՐԻՑ ԵՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ, ՊԱՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ, ԻԿՕՄՕՍ-ՀԱՅԱՍՏԱՆԸ և այլոք, ըստ վերաբերության:
 - Համայնքներին վերաբերող տեղեկատվությունը (պատմական կենտրոններ, քաղաքի հոգաժողովի ներքո գտնվող հուշարձանները) կստուգվեն և կհաստատվեն համապատասխան ՀԱՄԱՅՆՔԻ կողմից:
- Բոլոր տեքստերը ենթարկվում են լրացուցիչ վերանայման և խմբագրման ԻԿՕՄՕՍ – Հայաստանի և AMAP-ի կողմից և ըստ անհրաժեշտության նորից կարող են ներկայացվել հետագա ստուգման:

- AMAP-ը կթարգմանի բոլոր տեքստերը անգլերեն, հայերեն, ռուսերեն, իտալերեն և ֆրանսերեն՝ տեղեկատվական վահանակների համար:
- AMAP-ը կվերաձևավորի բոլոր վահանակները և նշանները:
- ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՏՈՒՆԵՐԸ կստանան իրենց ապրանքանիշը գովազդելու իրավունք տեղեկատվական վահանակների և ցուցանակների վրա, ինչպես նշված է [վահանակների թարմացում](#) բաժնում վերևում:
- AMAP-ը կապահովի և կվերահսկի վահանակների, նշանների և առաջարկում նշված այլ առարկաների արտադրության գործընթացը:
- Համապատասխան ԳՈՐԾԸՆԿԵՐԸ կպատրաստի հատակագիծը և կտեղադրի այս առաջարկում թվարկված բոլոր նյութերը որպես ծրագրին տրված նվիրատվություն իր սեփական վարչությունների, բյուջեի և աշխատակիցների միջոցով:
- Ստանալով ֆինանսավորումը՝ AMAP-ը կթարմացնի էլեկտրոնային կայքը առաջարկվող ծրագրի տևողության ողջ ընթացքում:
- AMAP-ը միջոցառումներ կկազմակերպի հովանավորների համար, ինչպես նկարագրված է առաջարկում:
Գործընկերները և հովանավորները կաջակցեն շնորհանդեսներին՝ իրենց նվիրատվություններով, մասնակցությամբ և ՋԼՄ-ներով թողարկվող գովազդներով:
- AMAP-ը դրամաշնորհատուների փոխարեն կհետևի ծրագրի առաջընթացին՝ համոզվելու, որ ծրագիրն իրագործվում է ըստ պլանի:

ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ▲

Գործընկերներ՝ ՀՀ Մշակույթի նախարարություն (ՄՆ), Սուրբ Էջմիածնի Դիվանապետ (Էջմիածին), Հնագիտության և Ազգագրության Ինստիտուտ (ՀԱԻ), ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն (ՏԿՆ), ԻԿՕՄՕՍ/Հայաստան ՀԿ, Գյումրիում Իտալիայի պատվավոր հյուպատոսարան, Հայաստանի բուսաբանական միություն, «Հայաստանի թռչունների պահպանման միություն» ՀԿ (ՀԹՊՄ), «Դեմոկրատիան այսօր» ՀԿ (ԺԱ), «Տուր Արմենիա» և «Արմենիա Նաու» ինտերնետային օրաթերթ: Ըստ անհրաժեշտության ծրագրի իրականացման գործընթացներում կան որոշակի ներդրումների համար կարող են ներգրավվել նաև այլ գործընկերներ:

Հովանավորներ. Ծրագիրը կողջունի հովանավորների ներդրումները ծրագրի առանձին բաղադրիչներում կամ ամբողջ ծրագրում:

Ամեն տարի դրամաշնորհատուների անունները /լոգոտիպերը/ կնշվեն մեկ տարի շարունակ նրանց կողմից ուղղակիորեն ֆինանսավորվող առանձին վահանակների և նյութերի վրա, լոգոտիպը կտեղադրվի 5 սմ բարձրությամբ վահանակների ստորին հատվածում կամ կզբաղեցնի վահանակի բարձրության 6%-ը՝ կախված նրանից, թե որն է ավելի մեծ:

ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ▲

Մայր Աթոռ Սբ Էջմիածին (ՄԱ)

ՄԱ-ն ևս մեր կարևոր գործընկերն է, որն ապահովում է իր հոգածության ներքո գտնվող հուշարձանների համար անհրաժեշտ թույլտվություններ, հաստատում է այդ հուշարձանների համար նախատեսված վահանակների տեքստերի բովանդակությունը, կազմակերպում դրանց տեղադրումը: ՄԱ-ն արդեն հաստատել է, որ պատրաստական է շարունակել աջակցությունը AMAP-ի ծրագրերին:

ՀՀ մշակույթի նախարարություն (ՄՆ)

Մշակույթի նախարարությունը կենտրոնական դերակատարություն ունի ծրագրի հաջողության համար և AMAP -ի կարևոր գործընկերներից է: ՄՆ-ը շարունակելու է աջակցություն ցուցաբերել AMAP-ին՝ ապահովելով անհրաժեշտ թույլտվություններ իր իրավասության ներքո գտնվող հուշարձանների

համար, հաստատում է տեքստերը, տեղադրում վահանակներ և ուղեցույց նշաններ, տրամադրում ծրագրի հետ առնչվող այլ ծառայություններ: ՄՆ-ն արդեն հաստատել է, որ պատրաստական է շարունակել աջակցությունը AMAP-ի ծրագրերին:

Մատենադարանը ձեռագրերի ամենահարուստ գրադարաններից է աշխարհում, որն ունի մոտավորապես 17.000 ձեռագրերի հավաքածու, որոնք վերաբերում են հին և միջին դարերի հայկական մշակույթի և գիտական մտքի բոլոր ասպարեզներին: Այն նաև գիտական հետազոտություններ է կատարում և վերականգնում է ձեռագրերը՝ փրկելով դրանցից շատերը լիակատար քայքայումից: Մատենադարանը կլինի AMAP-ի աշխատանքի հիմնական գործընկերը, որպես հուսալի խմբագիր և պատմական տեղեկությունների ճշգրտման աղբյուր՝ տրամադրելով և հաստատելով այս ծրագրի համար անհրաժեշտ տեքստեր:

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն (ՏԿՆ)

ՏԿԼ-ը նույնպես մեր անչափ կարևոր գործընկերներից է: Այն անվճար իրականացնում է ճանապարհային բոլոր ուղեցույց-նշանների և վահանակների տեղադրումը՝ ծրագրին նվիրաբերելով իր ծառայությունները և AMAP-ին տրամադրում է դրանց պահեստավորման համար

Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային խորհուրդ (ԻԿՕՄՕՍ/Հայաստան ԶԿ)

ԻԿՕՄՕՍ-ը պատմամշակութային ժառանգության վայրերի հետազոտման, պահպանման և վերականգնման հարցերով զբաղվող միջազգային մասնագիտացված կազմակերպություն է: ԻԿՕՄՕՍ/Հայաստանն առաջարկել է ծրագրին տրամադրել մասնագիտական խորհրդատվություն և տեխնիկական աջակցություն, նպաստել գիտական հետազոտությունների և բովանդակության իր փորձագիտական նյութերով և նշանների ստանդարտիզացման առումով: Հանդիսանալով ՄՆ-ի ակտիվ գործընկեր՝ ԻԿՕՄՕՍ/Հայաստանը կնպաստի ծրագրի սահուն իրագործմանը:

Գյումրիում Իտալիայի պատվավոր հյուպատոսարան

Գյումրիում Իտալիայի պատվավոր հյուպատոսարանը նպաստում է հայ-իտալական բարեկամությանն ու համագործակցությանը մշակույթի բնագավառում: Այն նաև օգնում է բացահայտել, հաշվառել և խթանել հայկական մշակույթն Իտալիայում:

Գյումրիում Իտալիայի պատվո հյուպատոս Անտոնիո Մոնտալտոյի զլխավորությամբ, հյուպատոսարանը AMAP-ի ծրագրերի ջերմ աջակիցն է: Հյուպատոսարանի ուշադրության կենտրոնում Գյումրին է: Այն AMAP-ին աջակցում է վահանակների տեքստերի իտալերեն թարգմանությամբ և Գյումրիում հախճապակյա ցուցանակների տեղադրմամբ:

«Դեմոկրատիան այսօր» (ԴԱ)

«Դեմոկրատիան այսօր» ԶԿ-ի գործունեության ոլորտները 2-ն են՝ կանանց իրավունքներ և գյուղական համայնքների զարգացում: Երկուսն էլ կարևոր են մեր ծրագրի համար, քանի որ 2 խնդիրներն էլ փոխկապակցված են: ԴԱ-ն աշխատել և շարունակում է աշխատել սոցիալապես ծանր վիճակում գտնվող 48 գյուղերում՝ ձգտելով զարգացնել գործարարությունը և հնարավորություններ ստեղծել մշակույթի և տուրիզմի բնագավառներում: Այս ծրագրի շրջանակներում AMAP-ը կհամագործակցի ԴԱ-ի հետ՝ ընտրելու այն գյուղերը, որտեղ կլինեն «Հայաստանի Մետաքսի ճանապարհի» երթուղու կանգառները՝ իջևանատեղերը: Ընտրված համայնքներում կստեղծվեն այցելուների սպասարկման՝ տնական սննդամթերքի, ավանդական ճաշատեսակների, ձեռքի աշխատանքների վաճառքի հնարավորություններ, որոնք կնպաստեն տվյալ համայնքի սոցիալական կենսամակարդակի բարձրացմանը:

«Տուրվրմենիա»

«Տուրվրմենիա»-ն Հայաստանի մասին նյութեր սկսել է հրատարակել 1996թ. և համացանցում Հայաստանի մասին ամենահայտնի կայքերից մեկն է. կայքն ունի

անհրաժեշտ տարածքներ և կատարում այլ ծառայություններ: ՏԿԼ-ը արդեն հաստատել է, որ պատրաստական է շարունակել աջակցությունը AMAP-ի ծրագրերին:

ավելի քան 7 միլիոն այցելու և 60 միլիոն կարդացված էջ: Կայքը (www.TACentral.com) ավելի քան 1000 էջ տեղեկատվություն է պարունակում երկրի մասին՝ ներառյալ յուրաքանչյուր մարզին նվիրված առանձին բաժիններ, քարտեզներ, հատակագծեր և հողվածներ: «Տուրվրմենիան» շուտով կիրատարվի գիրք Հայաստանի մասին: «Տուրվրմենիան» ծրագրին կտրամադրի նյութեր՝ զծագրեր, քարտեզներ և հատակագծեր՝ դրանց նկատմամբ պահպանելով իր հեղինակային իրավունքը:

Բուսաբանության ինստիտուտ (ԲԻ – ՍԱ)

ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի սիստեմավորման և աշխարհագրության բաժինը (ԲԻ – ՍԱ) /բաժնի վարիչ՝ պրոֆ. Էլենոորա Գաբրիելյան/ տեխնիկական աջակցություն կցուցաբերի ծրագրին՝ բնության հուշարձանների վահանակների բովանդակության պատրաստման ընթացքում: Պրոֆ. Գաբրիելյանը ճանաչված գիտնական է՝ Անդրկովկասի բուսականության հարցերով մասնագետ: Նա «Հայաստանի բուսական աշխարհը» 11 հատորանոց հանրագիտարանի հեղինակն է, ինչպես նաև «Անդրկովկասի և հարակից շրջանների ծաղկաբույսերը» գրքի համահեղինակը (2007, Koeltz Scientific Books, Koenigstein): ԲԻ – ՍԱ-ը ծրագրին կտրամադրի տվյալներ, քարտեզներ և կոորդինատներ, ինչպես նաև լրացուցիչ տեղեկություններ Հայաստանի եզակի ծաղկատեսակները ներկայացնող բնության «արահետների» ուղեցույցի համար:

Հայաստանի թռչունների պահպանության միություն (ՀԹՊՄ)

ՀԹՊՄ-ը մի կազմակերպություն է, որն աշխատում է Հայաստանում բնակվող կամ երկրի տարածքով չվող ավելի քան 350 թռչնատեսակների պահպանման ուղղությամբ: Հայաստանի փխրուն բնության պահպանության, հատկապես թռչնատեսակների պահպանման համար նրանք իրականացնում են կրթական ծրագրեր, բնական միջավայրերի պահպանության և բարեկարգման գործունեություն և քաղաքականության մշակում և իրագործում: ՀԹՊՄ-ի աշխատակիցները նաև նշանավոր կենսաբաններ են, որոնք տիրապետում են այլ կենդանական աշխարհի այլ տեսակների մասին գիտելիքների: Այս ծրագրի շրջանակներում ՀԹՊՄ-ը կտրամադրի նյութեր, կաջակցի տեքստերի խմբագրմանն ու վահանակների տեղադրմանը:

ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ (ՀԱԻ)

ԳԱԱ ՀԱԻ-ն AMAP-ի գործունեության ջերմ աջակիցներից է, որը տրամադրում է նյութեր և խմբագրում է տեքստերը AMAP-ի ընթացիկ աշխատանքներում: ԳԱԱ ՀԱԻ-ը կշարունակի աջակցել ծրագրին՝ տրամադրելով, խմբագրելով և ստուգելով անհրաժեշտ նյութերը:

ԴԵԿԱԿԱՐ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ▲

Ռիկ Նայ (AMAP-ի նախագահ, Ծրագրի գործադիր տնօրեն, Ծրագրի կառավարում և վերահսկում, Անգլերեն լեզվով բովանդակության տրամադրում)

Ռիկը Հայաստան է եկել 1992թ.՝ աշխատելու Հայաստանի Ամերիկյան համալսարանում: 1993թ. նա սկսել է աշխատել Ամերիկայի հայկական համագումարում (1993 – 1994թթ.) և Ժողովրդավարության և զարգացման հիմնադրամում

(FDD) (1994 – 1995թթ. որպես Կովկասյան գրասենյակի տնօրեն), USAID-ի ֆինանսավորած մարդասիրական օգնության ծրագրերում, որտեղ սկզբում ֆինանսների գծով տնօրեն էր, ապա Վրաստանին և Հայաստանին (հանրապետության բազմաթիվ դպրոցներին) 70 մլն դոլարին համարժեք մարդասիրական օգնություն բաշխող Ծրագրի տնօրեն: Ռիկը AMAP-ի՝ «Հայկական հուշարձանների ճանաչման Ծրագիր»-ի նախագահն է և ՀԿ-ի տնօրենը:

Բելա Կարապետյան (*AMAP-ի Փոխնախագահ, Գործադիր տնօրենի տեղակալ, Ուսումնասիրությունների և իրագործման համակարգող, Կառավարության և համայնքների միջև կապի պատասխանատու, «Թանգարան» ծրագրի պատասխանատու, ռուսերեն թարգմանություններ, Ծրագրային աշխատանքների վերահսկում*)

Իր աշխատանքային գործունեությունը Բելան սկսել է «Հայալեռնախազիծ» ինստիտուտում որպես տեղեկատվական ծրագրերի օգնական և թարգմանիչ, աշխատելով օտարերկրյա մասնագետների հետ այնպիսի ծրագրերի շուրջ, ինչպիսիք են աղետի (երկրաշարժի) գոտու վերականգնումը, «Եվրոպոլիս» խաղաղության միջազգային քաղաքը և Հայաստանի Ամերիկյան համալսարանի /ՀԱՀ/ ուսանողական քաղաքը: ՀԱՀ-ում Բելան աշխատել է նաև որպես դասախոսակազմի սպասարկման և հատուկ միջոցառումների համակարգող: Բելան 12 տարի աշխատել է ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի Հայաստանյան գրասենյակում. սկզբում ադմինիստրացիայում, ապա որպես համահանրապետական պարենային օգնության և համայնքային զարգացման ծրագրի համակարգող և վերահսկման հարցերով պատասխանատու:

Ռաֆայել Թորոսյան (*AMAP-ի փոխնախագահ, Գործադիր տնօրենի օգնական դիզայնի հարցերով, Որակի վերահսկում*)

Ռաֆայելը 1974 – 1998թթ. եղել է Սպորտի նախարարի օգնականը: 1993թ. նա սկսել է աշխատել (մինչև 1995թ.) Ամերիկայի հայկական համագումարում և Ժողովրդավարության և զարգացման հիմնադրամում (FDD), որպես ֆինանսների գծով տնօրենի օգնական, ապա ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և ՄԱԿ-ի Փախստականների գծով գերագույն հանձնակատարի ֆինանսավորած ծրագրերում (որոնք մարդասիրական օգնություն էին տրամադրում Վրաստանին և Հայաստանին) որպես ֆինանսների գծով տնօրեն: Ռաֆայելը «Թրանսլուրդիստրիս» Int'l Inc փոխնախագահն է, որն առաջարկում է խորհրդատվական, ինտերնետային և տեղեկատվական ծառայություններ, ինչպես նաև տպագիր և վեբ-դիզայն: Նրա աշխատանքը ներառում է բազմաֆունկցիոնալ տվյալների բազայի մշակում «Հայկական ավիաուղիներ»-ի բիզնես և ներդրումային ծրագրերի համար, «Աերոֆլուտ» ռուսական ավիաուղիների ռեգիոնալ մարկետինգ և ՏՏ խորհրդատվություն (Մեծ Բրիտանիա, ճապոնիա և Ռուսաստան (Մոսկվա)), գրաֆիկական դիզայն, վեբ-կայքերի նախագծում և այլն:

Աշոտ Երվանդյան (*Տնօրենի օգնական, Արտադրության և տեղադրման հարցերով պատասխանատու, կառավարության և համայնքների միջև կապի պատասխանատու*)

Աշոտը AMAP-ի հիմնադիր-թիմի անդամներից է: Նա աշխատել է Ամերիկայի հայկական համագումարի հետ (1992 – 93թթ., «Տաք ձմեռ» ծրագիր) և Ժողովրդավարություն և զարգացման հիմնադրամում (1993 – 1994թթ., «Տաք ձմեռ» ծրագիր): Աշխատանքային մեծ փորձ ունի շինարարության, արտադրության ոլորտներում և մեր թիմի անփոխարինելի անդամն է, ունի շնորհիվ անխաթար իրականացվում են բոլոր վահանակների արտադրության և տեղադրման աշխատանքները:

Քրիստինե Բեսայան (*Ծրագրի օգնական, տեքստերի թարգմանություն և խմբագրում անգլերենից հայերեն, հայերենից անգլերեն*)

Քրիստինեն Երևանի պետական համալսարանի Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի (անգլերեն բաժնի) շրջանավարտ է: 2000 – 2005թթ. աշխատել է «Ինտերլինգվա» լեզվագիտական համալսարանում: 2006թ.-ից Քրիստինեն աշխատում է «ԱրմենիաՆաու» ինտերնետային օրաթերթում, որտեղ նա պատասխանատու է խմբագրության առօրյա աշխատանքի համար և հանդես է գալիս որպես թարգմանիչ:

Հասմիկ Ազիզյան (*Ծրագրի օգնական, տեքստերի խմբագրում և ստուգում*)

Հասմիկն այժմ աշխատում է ԻԿՕՄՕՍ – Հայաստանում՝ որպես Հայաստանի և հայկական ժառանգության հուշարձաններով զբաղվող մասնագիտացված մարմնի գլխավոր քարտուղար: Հասմիկը պատասխանատու է բնագրերում փաստերի ստուգման և քերականական սխալների ուղղման համար և խմբագրական գործընթացի կարևորագույն օղակներից է: Նրա ստուգումները քառաստիճան գործընթացի առաջին և վերջին փուլերն են:

Հարություն «Սայաթ» Թադևոսյան (*Ծրագրի օգնական, տեղադրումների, գյուղական համայնքների հետ կապի պատասխանատու*)

Սայաթն ավարտել է ԵՊՄԳ-ի Ընդհանուր տեխնիկական բաժինը: Անգլիայի Բերմինգհեմի համալսարանում սովորել է անգլերեն: Մասնագիտական վերապատրաստում ունի հետևյալ ոլորտներում՝ Ծրագրային նախագծում և կառավարում (ԱՄՆ, Խաղաղության կորպուս), Բանակցելու հմտություններ (TD, GTZ), Աշխատանքային օրենսգիրք (BSC/Երևան), Ֆինանսական կառավարում (NATBA CPE/Իտալիա), Ղեկավարելու արվեստ (CORDAID&CTC/ Վրաստան): 1997 – 2002թթ. Սայաթն աշխատել է «Հայկական Կարիտաս» բարեգործական ՀԿ-ում որպես ադմինիստրատոր, փոխտնօրեն, տնօրենի պաշտոնակատար և գործադիր տնօրենի օգնական: Այժմ նա «Կամար» սոցիալ-կրթական ՀԿ-ի գործադիր տնօրենն է և «Կամուրջ» միկրոձեռնարկատիրական զարգացման ֆոնդի հոգաբարձուների խորհրդի անդամ:

Այլ պաշտոններ

Ծրագիրը կվարձի հաշվապահ, աշխատանքները վերահսկող աշխատակիցներ և գործավարներ, ինչպես նաև ԻԿՕՄՕՍ – Հայաստանի փորձագետ խորհրդատուներ (տե՛ս Գործընկերներ բաժնում), ժամանակավոր թարգմանիչներ, օտար լեզվով տեքստերի սրբագրիչներ, գիտահետազոտողներ, լուսանկարիչներ և վարորդ/արտադրական աշխատանքների համակարգող: